

մը չունի⁶ : Այն ճառագայթները որոնցմով կը շրջանակուէին գրական (pileus) պատկերը, կը վկայէին իրենց յարգանքը աստուածային խորհրդանշանին հանդէպ : Մոգերը որ սովորաբար կը գրգռէին իտարովի հրոսակները քրիստոնէայ տաճարները քանդելու, պարտք զգացին հանդարտիլ ի տես այս անձնաւորութիւններու, որ հազած էին իրենց և իրենց աստուածոյն զգեստը : Արբավայր մը զոր կը պաշտպանեն պատկառելի խորհրդանշաններ և և իրենց նախորդներուն պատկերը, սրբապղծութիւն մը պիտի ըլլար կրտսի տալը :

Այս հետաքրքրական արտավէպը հասած է մեզ պատկերամարտութեան վերաբերեալ Թ. դարու սինոդական նամակի մը մէջ, որուն բնագիրը բլխած է Երուսաղէմի 836ի ժողովին մէջ և առջին անգամ տպագրուած է 1874ին :

634ին Արաբներու արշաւանքին պատճառաւ Երուսաղէմի քրիստոնէաները արգիլուեցան Բեթղեհէմ երթալ Ս. Ծնունդը տօնելու համար : Նոյն ժամանակը Սոփրոնիոս պատրիարքը իր ծննդեան քարոզին մէջ կ'ակնարկէ ըսելով թէ Բեթղեհէմը պաշարուած է և այժմ անմերձենալի է, անկարելի է տեսնել նուիրական Մսուրը և Այրը : Նոր արշաւողները եկեղեցիին և այրին զարդերը և կարասիները աւերեցին, բայց եկեղեցին անաշարտ թողուցին : 638էն սկսեալ Ս. Երկիրը արաբական իշխանութեան տակ մը մնար, ինչպէս նաև Բեթղեհէմը :

Օմար ամիրապետին Երուսաղէմի գրաւած ժամանակ, Ս. Ծննդեան եկեղեցիին քանդումէ զերծ մնալուն պարագան իսլամ պատմագիր Եագութ (ԺԳ. դար) հետեւեալ կերպով կը նկարագրէ, (Տե՛ս Palestine under the Moslems, էջ 300) «Բեթղեհէմն է այն տեղը ուր Յիսուս ծնաւ. ան մօտ է Երուսաղէմի : Հոն կան շատ գեղեցիկ շուկաներ : Հոն կը գտնուէր այն արմաւենիի ծառը՝ զոր կը յիշատակէ Գուրանը : Այս տեղերը արմաւ էի հասուննար. բայց այս մէկ ծառը բացառութիւն է : Ան յիշուած է Գուրանին մէջ, և Մորիամին կը տրուի նոյն արմաւէն Եգիպտոս փախած ժամանակ. ասիկա եղաւ հրաշք մը պաշտպանելու համար զանիկա. զրոյցը այսպէս կ'ըսէ. եկեղեցի մը, որուն նմանը շրջակայքը չի գտնուիր : Երբ Օմար ամիրապետը Երուսաղէմ եկաւ, Բեթղեհէմցի վանական մը անոր մօտեցաւ և ըսաւ. քեզմէ շնորհք մը պիտի խնդրեմ Բեթղեհէմի համար. Օմարը ըսաւ. այդ տեղը չեմ